2020 թ. դեկտեմբեր 31

ՏՆՕՐԵՆԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամ

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁ

«Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամն (այսուհետ՝ «Հիմնադրամ») իր ստեղծման օրվանից անխոնջ իրականացրել է իր առաքելությունը՝ հատուցումներ կատարելով մարտական գործողությունների արդյունքում զոհված և հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին ու նրանց ընտանիքներին:

Հատկապես այս տարի կարևորվեց Հիմնադրամի գործունեության անհրաժեշտությունը, քանզի սեպտեմբերի 27-ին մեր թշնամիների կողմից սանձազերծված պատերազմը հանգեցրեց կորուստների աննախադեպ աճի:

Պատերազմի առաջին իսկ օրվանից մենք լծվեցինք համազգային նվիրաբերական դրամահավաք կազմակերպելու գործին, քանզի ենթադրում էինք, որ այդ գումարների կարիք լինելու է: Ի վերջո պատերազմ էր: Այս տարի մենք ստացել ենք 7.4 միլիարդ դրամի չափով նվիրաբերություններ՝ աշխարհի շուրջ 70 երկրներից:

Պատերազմի հարաբերական դադարից հետո մեր հաջորդ աշխատանքն էր սկսել ծնող, զավակ ու ամուսին կորցրած մեր հայրենակիցներին հատուցումներ կատարելը:

Այս տողերը գրելու պահին Հիմնադրամը հատուցումներ է կատարել արդեն 741 ընտանիքների: Գործընթացն ինտենսիվ շարունակվելու է 2021 թվականին՝ մինչև հատուցումներ կատարենք բոլոր զոհված ու անհետ կորած զինծառայողների ընտանիքներին, ինչպես նաև հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին:

Հաշվետվողականությունն ու թափանցիկությունը մեզ համար արժեքներ են: Այդ իսկ պատճառով հրապարակում ենք 2020 թվականի մեր **միջանկյալ հաշվետվությունը**՝ 2021 թվականի ապրիլին ամբողջականը հրապարակելու խոստմամբ:

Օգտվելով առիթից, շնորհակալություն եմ հայտնում 1000 դրամներ վճարած մեր բոլոր հայրենակիցներին, նվիրաբերություն կատարած մեր բոլոր աջակիցներին, այս ընթացքում մեզ օգնած բոլոր անհատներին ու կազմակերպություններին ու, ի վերջո, օրնիբուն Հիմնադրամի աշխատանքներն իրականացրած մեր բոլոր կամավորականներին: Շնորհակալ եմ:

Վարուժան Ավետիքյան

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հատուցումներ	8,3 միլիարդ
Պարտադիր վճարներ	9,2 միլիարդ
Նվիրաբերություններ, որից՝	7,4 միլիարդ
Բանկային փոխանցում	5,7 միլիարդ
Կայքի միջոցով	1,7 միլիարդ

ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ

2020 թվականի ընթացքում որոշում է կայացվել 768 դեպքերի մասով, որոնցից 27-ը մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ի պատերազմը, 741-ը՝ պատերազմի հետևանքով:
Դեկտեմբերի 30-ի դրությամբ Հիմնադրամը կատարել է 1,159 հատուցում, որից՝

	Ընդամենը	Սպայական կազմ	Պայմանագրային զինվորական ծառայության ենթասպայական և շարքային զինծառայողներ	Պարտադիր զինվորական ծառայության շարքային կամ կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողներ	Կամավորներ
մինչև սեպտեմբերի 27	**417**	**68**	**99**	**250**	**0**
Զոհված	343	56	80	207	
1 կարգի հաշմանդամ	25	2	4	19	
2 կարգի հաշմանդամ	49	10	15	24	
սեպտեմբերի 27-ից հետո	**741**	**109**	**210**	**401**	**21**
Զոհված		109	210	401	21

ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՔԱՆԱԿ՝ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ

2017	37	3%
2018	189	16%
2019	165	14%
2020	768	66%
Ընդամենը	1,159	



ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արդեն հաստատված հատուցումների գծով Հիմնադրամի 20 տարվա պարտավորություններն ընդամենը կազմում են 54,6 միլիարդ ՀՀ դրամ:

	Ընդամենը	Որից 2020 թվականի ընթացքում ձևավորված
Զոհված	52,7 միլիարդ	41,6 միլիարդ
1 կարգի հաշմանդամ	837,3 միլիոն	70 միլիոն
2 կարգի հաշմանդամ	1 միլիարդ	83,8 միլիոն
Ընդամենը	54,6 միլիարդ	41,8 միլիարդ

2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՏԱՑՎԱԾ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ԱՐԺՈՒՅԹԻ



ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1ՄԼՆ
ՄԱՐՏԱ ՀՐԱՎԵՐ

Հիմնադրամի կարևոր նախաձեռնություններից է «Մեկ միլիոն հայ» մարտահրավերը, որի շրջանակներում փնտրում ենք մեկ միլիոն հայ ողջ աշխարհում, ովքեր 25,000 ՀՀ դրամ, 50 դոլար կամ եվրո ամսական նվիրաբերություն կկատարեն Հիմնադրամին:

Թվում է, թե 1 միլիոնը մեծ թիվ է: Ոչ: Որպեսզի 1 միլիոն մարդ ամեն ամիս կանոնավոր նվիրաբերություն կատարի մեր Հայրենիքը պաշտպանած հերոսների ընտանիքների բարօրության համար, ընդամենը անհրաժեշտ է 215 մարդ, ովքեր ոչ միայն կնվիրեն այդ գումարը, այլև իրենց հերթին կհամոզեն ևս 5 հոգու, որոնք իրենց հերթին կհամոզեն ևս 5 հոգու և որոնք էլ իրենց հերթին կհամոզեն ևս 5 հոգու և այդպես շարունակ: Այս թիվը հնչեցնում ենք հաշվի առնելով 70% ձախողման հավանականությունը:

Այս նախաձեռնությանն արդեն իսկ միացել են ավելի քան 1,000 նվիրաբերող:

«Մեկը երկու դարձնենք» ծրագրի նպատակն է ավելացնել Հիմնադրամին կատարվող նվիրաբերությունների ծավալը, ինչպես նաև բարձրացնել Հիմնադրամի և մասնավոր ընկերությունների միջև կապը: Ծրագիրը նաև վառ օրինակ է սոցիալական պատասխանատվության, որի միջոցով ընկերությունները կարող են ցույց տալ իրենց վերաբերմունքը հասարակության, և այս պարագայում նաև մեր բանակի նկատմամբ:

Ծրագրի շրջանակներում ընկերությունը պարտավորվում է իր աշխատակիցների կողմից վճարվող դրոշմանիշային վճարների չափով նվիրաբերություն կատարել Հիմնադրամին:

Նախաձեռնությանն արդեն միացել են ավելի քան 40 ընկերություն:

ՄԵԴԻԱՅԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔ

«Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ»-ը սկսել է փոխհատուցման գործընթացը	Ո՞վքեր կարող են դառնալ «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ»-ի շահառու
Հիմնադրամի սկզբունքները չեն փոխվել. պետք է հիշել, որ սա հարկ չէ	Հարցազրույց Վարուժան Ավետիքյանի հետ
Երկրի հյուրասրահում Դավիթ Աղաբեկյանի հարցերին պատասխանում է Վարուժան Ավետիքյանը	Առավոտ լուսո հարցազրույց. Վարուժան Ավետիքյան
ՊՆ-ն առաջարկում է Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին 1000 դրամի փոխարեն 3000 դրամ վճարել	Հարցազրույց Վարուժան Ավետիքյանի հետ
Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը հատուցել է 475 դեպք, ևս 100-ը՝ այս շաբաթ	Պահն է, որ ամեն սփյուռաքահայ երկուական դոլար փոխանցի Զինծառայողների հիմնադրամին
Պատգամավորներն առաջարկում են զինվորի հիմնադրամի վճարը ավելացնել ըստ աշխատավարձի՝ 1000-ից 10 հազար դրամ	Եթե զինծառայողի հետ դժբախտ պատահար լինի, իր ընտանիքն ապահով ձեռքերում է
Հայաստանը պետք է կառուցի պատերազմի տնտեսություն	Զոհված զինծառայողների 475 ընտանիքի արդեն հատուցում է տրամադրվել
Նվիրատվությունների հարցում Սփյուռքը պետք է հաղթի Հայաստանին	Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի գործադիր տնօրեն Վարուժան Ավետիքյանի ասուլիսը
Աղետ կլինի, եթե հատուցումներն ամբողջ ծավալով չիրականացվեն	Մեր եկամուտները թաքցնելով՝ մենք հարվածում ենք մեր ԶՈՒ-ին. Այս պատերազմը զարթուցիչ պետք է լինի
Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին՝ 3000 դրամ 1000 դրամի փոխարեն	Կարևոր է, որ 1000 դրամը դառնա 3000
A Collective Responsibility: Insuring Their Dignity	Եթե հիմնադրամի գումարները չբավականացնեն, էսպես, թե էնպես, փողի աղբյուրը լինելու է պետական բյուջեն

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԹԻՄԸ